

Հարգելի պարոն Շահգելյան

Ձեր 12.02.2009 թվականի N ՇՄ-212 հանձնարարականի համաձայն ներկայացնում եմ ՀՀ Կոտայքի մարզում 2009 թվականի մարտ ամսին կայանալիք ՀՀ կառավարության արտագնա նիստի օրակարգի 3 նախագիծ:

Առդիր` 7 էջ:

Հարգանքով`

ՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2009 թվականի N Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Կոտայքի և հարակից մարզերում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայությունն պետական ոչ առևտրային կազմակերպության կատարած աշխատանքները դժվարանցանելի տարածքներում, ինչպես նաև առկա տրանսպորտային մջջոցների ֆիզիկապես մաշվածությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայությունն ՊՈԱԿ-ին կանոնադրությամբ նախատեսված աշխատանքներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը II եռամսյակում հատկացնել 5.000 հազ. դրամ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման « ծախսեր» հոդվածով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՎՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում, պահանջվում է պետական բյուջեից 5.000 հազար դրամի հատկացում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ Կոտայքի Մարզում ՀՀ կառավարության արտագնա նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 12-ի N 01/15/716-09 հանձնարարականի:

Որոշման նախագծով առաջարկվում է, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի սեյսմիկ դիտակայանների սպասարկումն իրականացնելու համար ՀՀ ԱԻՆ /Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն/ ՊՈԱԿ-ին ավտոտրանս ձեռք բերելու համար տրամադրել ֆինանսական միջոցներ:

ՀՀ ԱԻՆ «ՍՊԱՄԾ» ՊՈԱԿ-ը խիստ կարիք ունի բարձր անցանելջության ավտոտրանսպորտային միջոցի, քանի որ այսօրվա դրությամբ նրա հաշվեկշռում գտնվող համարյա բոլոր տրանսպորտային միջոցները քսան և ավելի տարվա են, ֆիզիկապես մաշված են և այդ տրանսպորտային միջոցների թե պահպանումը, և թե դրանց օգտագործումը պահանջում են լրացուցիչ ֆինանսական ծախսեր՝ տնտեսապես ձեռնտու չէ դրանց վերանորոգելը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ ԱԻՆ «ՍՊԱՄԾ» գործակալության և «ՍՊԱՄԾ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2009 թվականի N Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՍԱՐՁՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՏԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում սեյսմիկ վտանգի բարձր մակարդակը, ինչպես նաև տարածքում առկա դիտակայանների սակավությունը, Կոտայքի մարզի որոշ ակտիվ խզվածքային գոտիներում դիտակայանների բացակայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում ստեղծել **երեք** դիտակայան:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնել.
 - 1) մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել(Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն).
 - ա. նոր դիտակայանների ստեղծման համար անհրաժեշտ երկրաբանա-երկրաֆիզիկական համալիր հետազոտությունների հիմնավորում և ծրագիր,
 - բ. անհրաժեշտ կոմունիկացիաների անցկացման և շինվերանորոգման աշխատանքների ծրագիր,
 - գ. անհրաժեշտ սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծրագիր,
 - դ. նոր աշխատատեղերի ստեղծման հետ կապված լրաֆինանսավորման ծրագիր:
 - 2) Սույն որոշման 1-ին կետի ա, բ, գ, ենթակետերում նշված ծրագրերի կատարման համար անհրաժեշտ ֆինանսավորման հնարավորությունները **առաջիկա երեք տարիների ընթացքում** (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՏԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Ստորև ներկայացվում է մեկ դիտակայանի ստեղծման համար մոտավոր ֆինանսական հաշվարկ.

1. Դիտակայանների տեղադրման համար անհրաժեշտ երկրաբանաերկրաֆիզիկական համալիր հետազոտություններ – 1500000 դրամ,
2. Կոմունիկացիաների անցկացում
 - 2.1 Կապ – 150000,
 - 2.2 Էլեկտրասնուցում – 150000,
3. Շինարարական աշխատանքներ
 - 3.1 Տարածքների ցանկապատում – 200000,
 - 3.2 Տնակների տեղադրում, պատվանդանների պատրաստում – 350000,
 - 3.3 Հորատանցքերը աշխատանքային վիճակի բերում – 350000,
4. Սարքերի և սարքավորումների ձեռք բերում – 2500000,
5. Նոր աշխատատեղերի ստեղծման համար լրացուցիչ ֆինանսավորում – 2200000
Ընդամենը՝ մեկ դիտակայանի ստեղծման համար կպահանջվի մոտավորապես 7400000 դրամ:
Անհրաժեշտ ֆինանսավորման չափը և աշխատանքների կատարման ժամանակացույցը առավել մանրամասն կներկայացվի ծրագրի ներկայացման ժամանակ՝ նախագծի ընդունումից հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՏԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷՎԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՏԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ Կոտայքի Սարգում ՀՀ կառավարության արտագնա

նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 12-ի N 01/15/716-09 հանձնարարականի:

ՀՀ Կոտայքի մարզում գործում են «ՍՊԱԾ»-ի հետևյալ դիտակայանները՝ «Գառնի» համալիր կայան՝ գյուղ Գառնի, «Ձորաղբյուր» հիդրոէլեկտրակայանի կայան՝ գյուղ Ձորաղբյուր, «Կապուտան» հեռաչափական կայան՝ գյուղ Կապուտան: Հաշվի առնելով Կոտայքի մարզի սեյսմոտեկտոնական և երկրաբանական առանձնահատկությունները, դիրքը, առկա խզվածքները, ակտիվ սեյսմիկ օջախների առկայությունը՝ անհրաժեշտություն է առաջացել զարգացնել և ավելացնել ինչպես չափվող պարամետրի քանակը, այնպես էլ դիտակետերի քանակը:

Մարզում առկա են հանքայնացված ինքնահոս հորատանցքեր, որտեղ կարելի է կազմակերպել ստացիոնար դիտակետեր և խզվածքային գոտիներում տեղադրել համալիր կայաններ: Որպես տեղամասեր դիտարկվում են Բջնից, Արզնից, Մեղրածորը, Հրազդանը, Հանքավանը:

Արդյունքում՝ նոր դիտակայանների ստեղծումը և եղածներում ավելացնելով չափվող պարամետրի քանակը՝ կբարձրանա ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման արդյունավետությունը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՍԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության և «ՍՊԱԾ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2009 թվականի N Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ **ԵՎ ՍԵՎԱԲԵՐԴԻ ԶՐԱՄԲԱՐԻ ՎԵՐԱՇԱՀՎԱԳՈՐԾՄԱՆ** ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնախնդիրները և տարածքի սեյսմիկ վտանգի բարձր մակարդակը, նկատի ունենալով Սևաբերդի ջրամբարի վերաշահագործման կարևորությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ներկայացնել.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հրազդանի ՋԵԿ-ի և Սևաբերդի ջրամբարի սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագիր (Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն).

ա. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հրազդանի ՋԵԿ-ի և Սևաբերդի ջրամբարի տարածքների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիր

բ. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հրազդանի ՋԵԿ-ի և Սևաբերդի ջրամբարի տարածքների սեյսմիկ ռիսկի գնահատման ծրագիր և ռիսկի նվազեցման առաջարկությունների ներկայացում:

2) Սույն որոշման 1-ին կետի ա, բ, գ, ենթակետերում նշված ծրագրերի կատարման համար անհրաժեշտ ֆինանսավորման հնարավորությունները (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Ստորև ներկայացվում է ծրագրի կատարման համար մոտավոր ֆինանսական հաշվարկ.

1. Սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքներ
 - 1.1 Հրազդանի ՁԵԿ-ի համար – 7000000 դրամ,
 - 1.2 Սևաբերդի ջրամբարի համար - 1500000 դրամ,
2. Սեյսմիկ ռիսկի գնահատման ծրագիր
 - 2.1 Հրազդանի ՁԵԿ-ի համար – 3000000 դրամ,
 - 2.2 Սևաբերդի ջրամբարի համար - 7000000 դրամ,
3. Սեյսմիկ ռիսկի նվազեցման առաջարկությունների ներկայացում – կատարվում է «ՍՊԱԾ» գործակալության կողմից
Ընդամենը կապահանջվի մոտավորապես 18500 հազար դրամ:
Նախագծի ընդունումից հետո անհրաժեշտ ֆինանսավորման չափը և աշխատանքների կատարման ժամանակացույցը առավել մանրամասն կներկայացվի ծրագրի ներկայացման ժամանակ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացվող որոշման մասագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ Կոտայքի Մարզում ՀՀ կառավարության արտագնա

նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 12-ի N 01/15/716-09 հանձնարարականի:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածի ՄՊԱԾ գործակալությունը պատասխանատվություն է կրում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման համար:

Բացի այդ լիազորված մարմինը սահմանած կարգով հաստատում է ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման, դրա խիտ բնակեցված շրջանների, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարբեր մասշտաբների սեյսմամիկրոշրջանացման և սեյսմիկ ռիսկի քարտեզները, որոնք դրվում են տնտեսության զարգացման ծրագրերի հիմքում:

Այս ծրագրերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրության են արժանանում շենքերի ու շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքները՝ որպես սեյսմիկ ռիսկի գնահատման և նվազեցման ուղղված միջոցառումների առաջին էտապ:

Որոշման նախագծով առաջարկվում է սեյսմիկ ռիսկը նվազեցնելու նպատակով ներկայացնել լրացուցիչ հետազոտությունների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության և տեխնիկական վիճակի գնահատման, շենքերի ու շինությունների ուժեղացման միջոցառումների, անհրաժեշտության դեպքում նաև վերակառուցման ծրագրեր:

Նշված աշխատանքների կատարումը պայմանավորված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 101 հոդվածի թ), 141 կետերով, «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի ա) կետով և 16 հոդվածով:

Սևաբերդի ջրամբարը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հյուսիսային հատվածում, Կոտայքի մարզի Սևաբերդ գյուղի հարավային մասում: Ջրամբարը շահագործման է հանձնված 1981թ.

Սևաբերդի ջրամբարի պատվարը, գտնվելով 0.2-0.3 ց վտանգի գոտում, և ի տարբերություն Հանրապետությունում շահագործվող Ագատի, Ջողազի, Սառնաղբյուրի, Գեղարդալճի և մի շարք այլ պատվարների, ունի ցածր սեյսմիկ ռիսկ:

Ջրամբարը կառուցված է Կոտայքի Մարզի 1200 հա ոռոգման նպատակով: Ջգալի ֆիլտրացիոն կորուստների կրճատման նպատակով ջրամբարում իրականացված են հակաֆիլտրացիոն միջոցառումներ 0,5 մմ պոլիէթիլենային թաղանթով և 0,3 մ հզորությամբ կավաավազային պաշտպանիչ շերտով:

Շահագործման սկզբից ջրամբարը ոչ մի անգամ չի լցվել մինջև նախագծային մակարդակը, որը բացատրվում է ջրամբար լցվող անհրաժեշտ ջրերի պաշարի բացակայությամբ և մեծ ֆիլտրացման կորուստներով: Այդ հանգամանքը պահանջում է իրականացնել լրացուցիչ ջրավազանի ինֆիլտրացիոն պայմանների ուսումնասիրություն և վերագնահատում այն ջրաղբյուրների, որոնք սնում են ջրամբարը: Նախկինում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ առկա են ջրի զգալի կորուստներ ջրի սնման ճանապարհին: Չի իրականացվել ջրամբարի թասից ջրի կորուստների օջախների քարտեզագրումը, չի գնահատվել կատարված հակաֆիլտրացիոն միջոցառումների արդյունավետությունը:

Տեխնիկատնտեսական առումով, միանգամայն հնարավոր է Սևաբերդի ջրամբարի վերաշահագործարկումը՝ համապատասխան միջոցառումների իրականացման դեպքում:

Մակրոկայանի հոսքի զգալի ֆիլտրացիոն և ջրամբարի թասից ջրի անթույլատրելի կորուստները արդիական են դարձնում հետևյալ խնդիրների լուծումը.

- Ջրավազանի ֆիլտրացիոն պայմանների ուսումնասիրումը, այդ թվում նրա հիմնական ջրաղբյուրների ծախսերի գնահատումը:

- Հակաֆիլտրացիոն միջոցառումների արդյունավետությունը թասում և ջրի կորուստների տեղամասերի քարտեզագրումը

- Նոր հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացումը ջրամբարի թասում, ինչպես նաև աջ և ձախ ջրհոսքերում:

Բացի վերը նշված 1200 հա հողերի ոռոգումից, Մարզի նշված տարածքը, որը ներառում է Գեղամա լեռների արևաշատ և գեղատեսիլ տարածքը, կարող է վերածվել գրոսաշրջության շուրջտարյա հանգստի կազմակերպման գոտու, որը ոչնչով չի զիջի Ծաղկածորի հանգստավայրերին՝ Երևանին շատ մոտ գտնվելու պատճառով:

Մույն ծրագիրը կարող է փոխարինել նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարար պրն Ն. Երիցյանի 30.12.2008թ. N 01/12.12/2536-08 գրությամբ ներկայացված «Մասիս, Միս և նոր Հայաստան լճափնյա հանգստավայրեր Հայաստանում» ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծին, նկատի ունենալով վերոհիշյալ նախագծի վերաբերյալ առկա առարկությունները:

Պետք է նշել, որ տարածքում կա նաև մեծաթիվ գործազրկություն, չնայած առկա են մարդկային, մասնագիտական և տեխնիկական զգալի ռեսուրսներ, շինարարություն և արտադրություն կազմակերպելու համար զարգացած ճանապարհային ցանց:

Սևաբերդի ջրամբարի վերաշահագործմամբ մեծապես շահագրգռնած է Հայաստանի Ագրարային պետական համալսարանը, քանի, որ հնարավորություն կստեղծվի մասամբ ոռոգելի դարձնել և ջրարբիացնել իր տրամադրության տակ գտնվող Էլիջայի տեղամասի շուրջ 800հա հողերը և բարելավել Բալահովիտի անասնաբուժական փորձարարական բազայի ջրամատակարարումը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՍԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության և «ՍՊԱԾ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները: